Անունը *Անունը, միջին անունը, ազգանունը, բաղադրիչ (օրինակ՝ սեր., կրտսեր., III, IV)*	**Գործատուի անունը** *(կամընտրական)*	**Այս անձը՝**	**Այս անձն ամսական որքա՞ն ապահովագին է վճարում**	**Այս առողջապահական ծրագիրը բավարարու՞մ է նվազագույն գումարի *չափորոշիչը***
Անձ 1		☐ այժմ ապահովագրված է ☐ պատրաստվում է ապահովագրվել *Սկսվելու օրը* _____ ☐ ապահովագրված չէ	$	☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ
Անձ 2		☐ այժմ ապահովագրված է ☐ պատրաստվում է ապահովագրվել *Սկսվելու օրը* _____ ☐ ապահովագրված չէ	$	☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ
Անձ 3		☐ այժմ ապահովագրված է ☐ պատրաստվում է ապահովագրվել *Սկսվելու օրը* _____ ☐ ապահովագրված չէ	$	☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ
Անձ 4		☐ այժմ ապահովագրված է ☐ պատրաստվում է ապահովագրվել *Սկսվելու օրը* _____ ☐ ապահովագրված չէ	$	☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

Գործատուն ի՞նչ փոփոխություն է նախատեսում նոր նպաստային տարում (եթե գիտեք):

☐ Գործատուն առողջության ապահովագրություն չի առաջարկելու:

☐ Գործատուն սկսելու է առողջության ապահովագրություն առաջարկել այն աշխատակիցներին կամ գոյություն ունեցող ամենաէժան ծրագրի ապահովագինը փոխելու է միայն այն աշխատակցի համար, ով բավարարում է **նվազագույն գնի չափորոշիչը*** (ապահովագները պետք է արտացոլեն լավ առողջության ծրագրերի գեղչը):

Որքա՞ն ապահովագին է գործատուն վճարելու այդ ծրագրի համար:

Ի՞նչ հաճախականությամբ _____

☐ շաբաթը մեկ ☐ երկու շաբաթը մեկ ☐ ամիսը երկու անգամ
☐ ամիսը մեկ ☐ եռամսյակը մեկ ☐ տարին մեկ

Փոփոխության ամսաթիվը _____

***Նվազագույն գնի չափորոշիչ** նշանակում է, որ ծրագիրը վճարում է ծրագրի կողմից աշխատակցին տրամադրվող նպաստների ընդհանուր գումարի առնվազն 60%-ը (1986 թ. Ներքին եկամուտների մասին օրենք (Internal Revenue Code of 1986), բաժին 36B(c)(2)(C)(ii)

Ձեզ օգնությո՞ւն է հարկավոր:

Զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կարող եք զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 20-ը, իսկ շաբաթ օրերին՝ 8-ից 18-ը: Կամ այցելեք **CoveredCA.com**.

Հավելված C

Գործատուի կողմից տրամադրվող ապահովագրության թերթիկ

COVERED CALIFORNIA

Այս թերթիկն անհրաժեշտ է միայն այն անձանց համար, ովքեր համապատասխանում են աշխատավայրից առողջության ապահովագրություն ստանալու պահանջներին: Այն անհրաժեշտ չէ «Covered California»-ի միջոցով առաջարկվող առողջության ապահովագրության որոշ ծրագրերի, այդ թվում՝ «Medi-Cal»-ի համար: Եթե չգիտեք, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է լրացնել այս թերթիկը, զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով, և հարցեք: Եթե կարծում եք, որ համապատասխանում եք «Medi-Cal» ստանալու պահանջներին, Ձեզ անհրաժեշտ չէ լրացնել այս թերթիկը: Պարզելու համար, թե արդյոք Դուք համապատասխանում եք «Medi-Cal» կամ ապահովագնի վճարման հարցում օգնություն ստանալու պահանջներին, կարդացեք F հավելվածը՝ 28-րդ էջում:

Եթե մեկից ավելի աշխատավայր է առողջության ապահովագրություն առաջարկում, յուրաքանչյուր գործատուի համար առանձին թերթիկ օգտագործեք:

▶ Տեղեկություններ աշխատակցի մասին *Այս բաժինն անհրաժեշտ է լրացնել:*

★ Նշեք Ձեր անունը և սոցիալական ապահովության համարը (SSN) *(կամընտրական)*: Այնուհետև պատճենահանեք այս էջը կամ դիմումը տարեք Ձեր գործատուի մոտ: Խնդրեք գործատուին լրացնել էջի մնացած մասը: Եթե պատճենահանեք այս էջը, մի մոռացեք ուղարկել այն Ձեր դիմումի հետ միասին:

Աշխատակից՝ Անունը	Միջին անունը	Ազգանունը	Բաղադրիչ	Սոցիալական ապահովության համարը (SSN) *(կամընտրական)*
				___ ___ ___ – ___ ___ – ___ ___ ___ ___

▶ Տեղեկություններ գործատուի մասին *Ձեր գործատուից հարցրեք այս տեղեկությունները:*

★ **Ծանոթություն գործատուի համար:** «Covered California»-ի դիմումը լրացնելու համար մեզ անհրաժեշտ է իմանալ այն առողջության ապահովագրության մասին, որը Ձեր աշխատակիցը կամ վերջինիս խնամյալները կարող են Ձեզանից ստանալու հնարավորություն ունենալ: Խնդրում ենք տրամադրել ստորև պահանջվող տեղեկությունները, եթե նույնիսկ Ձեր ընկերությունն առողջության ապահովագրություն չի առաջարկում:

Գործատուի անունը		Գործատուի նույնականացման համարը (EIN) ___ ___ – ___ ___ ___ ___ ___ ___ ___
Գործատուի հասցեն		Գործատուի հեռախոսի համարը
Քաղաքը	Նահանգը	Փոստային ինդեքսը

Ու՞մ կարող ենք դիմել այս աշխատավայրում տվյալ աշխատակցի առողջության ապահովագրության մասին հարցերով:

Հեռախոսի համարը	Էլ. փոստի հասցեն

☐ Մենք առողջության ապահովագրություն չենք առաջարկում: ☐ Այս աշխատակիցը չի համապատասխանում մեր ծրագրով ապահովագրություն ստանալու պահանջներին:

☐ Այս աշխատակիցը համապատասխանում է մեր ծրագրով ապահովագրություն ստանալու պահանջներին սկսած _____-ից *(սկսվելու օրը)*:

Ինչպե՞ս է կոչվում միայն տվյալ անձին հասնող ամենաէժան առողջապահական ծրագիրը, որին այս աշխատակիցը կարող է անդամագրվել այս աշխատավայրում: Նշեք միայն այն ծրագրերը, որոնք բավարարում են 2010 թ. «Հիվանդների պաշտպանության և մատչելի բուժսպասարկման մասին օրենքի» (Federal Patient Protection and Affordable Care Act of 2010) պահանջներով սահմանված **նվազագույն գնի չափորոշիչը***: Եթե համոզված չեք, հարցրեք Ձեր առողջության ապահովագրություն տրամադրողին:

Անունը՝ _____

☐ Ոչ մի ծրագիր չի բավարարում **նվազագույն գնի չափորոշիչը:***

Նվազագույն գնով ապահովագրության դեպքում աշխատակիցը որքա՞ն ապահովագին պետք է վճարեր: **$** _____

Ի՞նչ հաճախականությամբ

☐ շաբաթը մեկ ☐ երկու շաբաթը մեկ ☐ ամիսը երկու անգամ

☐ ամիսը մեկ ☐ եռամսյակը մեկ ☐ տարին մեկ

☐ այլ _____

Ի՞նչ փոփոխություն եք կատարելու նոր նպաստային տարում (եթե գիտեք):

☐ Մենք առողջության ապահովագրություն չենք առաջարկելու:

☐ Մենք սկսելու ենք առողջության ապահովագրություն առաջարկել այն աշխատակիցներին կամ գոյություն ունեցող ամենաէժան ծրագրի ապահովագինը փոխելու ենք միայն այն աշխատակցի համար, ով բավարարում է **նվազագույն գնի չափորոշիչը*** (ապահովագները պետք է արտացոլեն լավ առողջության ծրագրերի գեղչը):

Այդ ծրագրի համար աշխատակիցը որքա՞ն ապահովագին է վճարելու: **$** _____

Ի՞նչ հաճախականությամբ

☐ շաբաթը մեկ ☐ երկու շաբաթը մեկ ☐ ամիսը երկու անգամ

☐ ամիսը մեկ ☐ եռամսյակը մեկ ☐ տարին մեկ

Փոփոխության ամսաթիվը _____

* **Նվազագույն գնի չափորոշիչ** նշանակում է, որ ծրագիրը վճարում է ծրագրի կողմից աշխատակցին տրամադրվող նպաստների ընդհանուր գումարի առնվազն 60%-ը (1986 թ. Ներքին եկամուտների մասին օրենք (Internal Revenue Code of 1986), բաժին 36B(c)(2)(C)(ii)):

Ձեզ օգնությո՞ւն է հարկավոր:

Զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կարող եք զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 20-ը, իսկ շաբաթ օրերին՝ 8-ից 18-ը: Կամ այցելեք **CoveredCA.com**:

Հավելված D

Ընտրեք Ձեր մանկական ատամնաբուժական ծրագիրը և Ձեր առողջության ապահովագրման ծրագիրը

★ Եթե ցանկանում եք ավելի քան չորս հոգի նշել, ովքեր ցանկանում են մանկական ատամնաբուժական ծրագիր կամ առողջության ապահովագրման ծրագիր ընտրել, **պատճենահանեք այս էջը և հաջորդ էջը** և ուղարկեք Ձեր դիմումի հետ միասին:

Եթե կարծում եք, որ Դուք համապատասխանում եք ապահովագնի վճարման հարցում օգնություն ստանալու պահանջներին, ստորև նշեք Ձեր ուզած մանկական ատամնաբուժական ծրագրերի կամ առողջության ապահովագրման ծրագրերի անվանումը կամ «մետաղական կարգը»:
«Covered California»-ի կողմից տրամադրվող մասնավոր ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք **CoveredCA.com** կամ զանգահարեք **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500):

Եթե կարծում եք, որ Դուք համապատասխանում եք «Medi-Cal» ստանալու պահանջներին, ստորև նշեք առողջության ապահովագրման Ձեր ուզած ծրագրի անվանումը: «Medi-Cal»-ի Ձեր շրջանում գործող ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ անդամագրվելուց հետո Ձեր ծրագիրը փոխելու համար զանգահարեք «Health Care Options»՝ **1-800-430-4263** (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով, կամ այցելեք **healthcareoptions.dhcs.ca.gov:**

Պարզելու համար, թե արդյոք Դուք համապատասխանում եք «Medi-Cal» կամ ապահովագնի վճարման հարցում օգնություն ստանալու պահանջներին, կարդացեք F հավելվածը:

▶ Ընտրեք «Covered California»-ի Ձեր մանկական ատամնաբուժական ծրագիրը *միայն 18 տարեկան կամ ավելի փոքր երեխաների համար:*

Անունը *Անունը, միջին անունը, ազգանունը, բաղադրիչ (օրինակ՝ սրբ., կրտսեր., III, IV)*	**Մանկական ատամնաբուժական ծրագրի անվանումը**	**Ապահովագրման մակարդակը**	**Ծրագրի տեսակը**
Երեխա 1		☐ բարձր ☐ ցածր	☐ DEPO ☐ DPPO ☐ DHMO
Երեխա 2		☐ բարձր ☐ ցածր	☐ DEPO ☐ DPPO ☐ DHMO
Երեխա 3		☐ բարձր ☐ ցածր	☐ DEPO ☐ DPPO ☐ DHMO
Երեխա 4		☐ բարձր ☐ ցածր	☐ DEPO ☐ DPPO ☐ DHMO

DEPO՝ բացառիկ ատամնաբուժական սպասարկող կազմակերպություն, DHMO՝ ատամնաբուժական առողջության պահպանման կազմակերպություն, DPPO՝ նախընտրած ատամնաբուժական սպասարկման կազմակերպություն

▶ Ընտրեք Ձեր առողջության ապահովագրման ծրագիրը

«Medi-Cal»-ի և «Covered California»-ի ծրագրեր		Միայն «Covered California»-ի ծրագրեր		
Անունը *Անունը, միջին անունը, ազգանունը, բաղադրիչ (օրինակ՝ սրբ., կրտսեր., III, IV)*	**Առողջապահական ծրագրի անվանումը**	**«Մետաղական կարգը»**	**Մետաղի համարը**	**Ծրագրի տեսակը**
Անձ 1		☐ Platinum ☐ Gold ☐ Silver ☐ Bronze ☐ Նվազագույն ապահովագրման ծրագիրը		☐ EPO ☐ HMO ☐ HSA ☐ PPO
Անձ 2		☐ Platinum ☐ Gold ☐ Silver ☐ Bronze ☐ Նվազագույն ապահովագրման ծրագիրը		☐ EPO ☐ HMO ☐ HSA ☐ PPO
Անձ 3		☐ Platinum ☐ Gold ☐ Silver ☐ Bronze ☐ Նվազագույն ապահովագրման ծրագիրը		☐ EPO ☐ HMO ☐ HSA ☐ PPO
Անձ 4		☐ Platinum ☐ Gold ☐ Silver ☐ Bronze ☐ Նվազագույն ապահովագրման ծրագիրը		☐ EPO ☐ HMO ☐ HSA ☐ PPO

EPO՝ բացառիկ սպասարկող կազմակերպություն, HMO՝ առողջության պահպանման կազմակերպություն, HSA՝ առողջապահական խնայողական հաշիվ (ծրագրի այս տեսակն անդամներին հնարավորություն է տալիս «առողջապահական խնայողական հաշիվ» բացել և գումար դնել հաշվի վրա), PPO՝ նախընտրած սպասարկող կազմակերպություն

Ծրագրի ընտրությունն ավարտելու համար՝ առողջության ապահովագրման ծրագիր ընտրող 18 տարեկան կամ ավելի մեծ բոլոր անձինք պետք է համաձայնեն հաջորդ էջում շարադրված իրավարարության մասին համաձայնության պայմաններին և ստորագրեն այն:

Հավելված D շարունակությունը հաջորդ էջում

Ձեզ օգնությո՞ւն է հարկավոր:

Զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կարող եք զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 20-ը, իսկ շաբաթ օրերին՝ 8-ից 18-ը: Կամ այցելեք **CoveredCA.com**.

Համաձայնություն պարտադրող իրավարարության մասին

▶ «Covered California»-ի ծրագիր ընտրող յուրաքանչյուր անձի համար

Ես հասկանում եմ, որ յուրաքանչյուր մասնակից առողջապահական ծրագիր վեճերը և գանգատները, այդ թվում՝ առողջապահական ծրագրի, վերջինիս հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող սպասարկողների, վարչական անձնակազմի կամ ծրագրի հետ առնչվող այլ անձանց դեմ առողջապահական ծրագրի անդամության, ծառայությունների կամ ապրանքների համար վճարելու կամ դրանք տրամադրելու, բժշկի կամ հիվանդանոցի անփույթ վերաբերմունքի (որ բժշկական ծառայություններն անհրաժեշտ կամ արտոնված չեն եղել կամ անպատշաճ կերպով, անփութորեն կամ կիսատ են տրամադրվել) կամ բուժկենտրոնի պատասխանատվության կապակցությամբ իմ, իմ անդամագրված խնամյալների, ժառանգների կամ լիազոր ներկայացուցիչների վեճերը և գանգատները կարգավորելու սեփական կանոններն ունի:

Ես հասկանում եմ, որ եթե ես այնպիսի առողջապահական ծրագիր ընտրեմ, որը վեճերը կարգավորելու համար պարտադրող իրավարարություն է պահանջում, ապա ես ընդունում և համաձայնում եմ վեճերը և գանգատները կարգավորելու համար օգտվել պարտադրող իրավարարությունից (բացի Փոքր հայցերի դատարանի իրավասության տակ գտնվող հարցերից, որոնք գործող օրենքի համաձայն՝ չեն կարող հանձնվել պարտադրող իրավարարությանը) և հրաժարվում եմ երդվյալ ատենակալների դատարան դիմելու իմ իրավունքից ու չեմ կարող պահանջել, որ իմ գործի կապակցությամբ դատարանը որոշում կայացնի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գործող օրենքը պահանջում է հարցը դատարանում լուծել: Ես հասկանում եմ, որ յուրաքանչյուր առողջապահական ծրագրի վեճերի կարգավորման պայմանները, եթե այդպիսիք կան, շարադրված են տվյալ առողջապահական ծրագրի ապահովագրի փաստաթղթում, որը ես կարող եմ կարդալ համացանցում՝ **CoveredCA.com** հասցեում, կամ կարող եմ զանգահարել «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով և լրացուցիչ տեղեկություններ ստանալ:

▶ «Medi-Cal»-ի «Kaiser» առողջապահական ծրագիր ընտրող յուրաքանչյուր անձի համար

Ծանուցում պարտադրող իրավարարության մասին: Ես կարդացել եմ ծրագրի նկարագրությունը: Ես հասկանում եմ, որ որոշ տիպի վեճերի կարգավորման համար «Kaiser»-ը չեզոք պարտադրող իրավարարություն է պահանջում: Դրանց թվում են վեճերն այն մասին, թե արդյոք ճիշտ բուժում է տրամադրվել (որը կոչվում է բժշկի անփույթ վերաբերմունք) և նպաստների և ծառայությունների տրամադրման հետ կապված այլ վեճեր, այդ թվում՝ այն մասին, թե արդյոք տրամադրված բժշկական ծառայություններն անհրաժեշտ կամ արտոնված չեն եղել կամ անպատշաճ կերպով, անփութորեն կամ կիսատ են տրամադրվել: Եթե ես ընտրեմ «Kaiser»-ը՝ որպես «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր, ես հրաժարվում եմ վերը նշված վեճերի համար դատարան կամ երդվյալ ատենակալների դատարան դիմելու իմ սահմանադրական իրավունքից: Ես համաձայնում եմ նաև այդ վեճերը կարգավորել չեզոք պարտադրող իրավարարության միջոցով: Ես չեմ հրաժարվում նահանգային դատարան դիմելու իմ իրավունքից՝ այն հարցերով, որոնք ենթական են նահանգային դատարանում քննվելու:

▶ Բոլոր ծրագրերում անդամագրված անձանց ստորագրությունները

1-ին անձի ստորագրությունը կամ 1-ին անձի համար պատասխանատու կողմի կամ վերջինիս լիազոր ներկայացուցչի ստորագրությունը, եթե առնվազն 18 տարեկան է ▶	Ամսաթիվ
2-րդ անձի ստորագրությունը կամ 2-րդ անձի համար պատասխանատու կողմի կամ վերջինիս լիազոր ներկայացուցչի ստորագրությունը, եթե առնվազն 18 տարեկան է ▶	Ամսաթիվ
3-րդ անձի ստորագրությունը կամ 3-րդ անձի համար պատասխանատու կողմի կամ վերջինիս լիազոր ներկայացուցչի ստորագրությունը, եթե առնվազն 18 տարեկան է ▶	Ամսաթիվ
4-րդ անձի ստորագրությունը կամ 4-րդ անձի համար պատասխանատու կողմի կամ վերջինիս լիազոր ներկայացուցչի ստորագրությունը, եթե առնվազն 18 տարեկան է ▶	Ամսաթիվ

Ձեզ օգնությո՞ւն է հարկավոր:

Զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կարող եք զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 20-ը, իսկ շաբաթ օրերին՝ 8-ից 18-ը: Կամ այցելեք **CoveredCA.com**:

Հավելված E

Քայլ 2 տեղեկատու նյութեր *Այս ցուցակների օգնությամբ պատասխանեք 2-րդ քայլի հարցերին:*

Ներգաղթի կարգավիճակը

Այս ցուցակի օգնությամբ լրացրեք «Առողջության ապահովագրության համար դիմելը» բաժինը

Եթե Դուք ունեք ստորև նշված ներգաղթի կարգավիճակներից որևէ մեկը, հնարավոր է, որ ***Դուք համապատասխանեք առողջության ապահովագրություն ստանալու պահանջներին:***

- օրինական մշտական բնակիչ (LPR կամ «գրին քարտ» ունեցող)
- օրինական ժամանակավոր բնակիչ (LTR)
- ապաստանյալ
- փախստական
- Կուբայից/Հաիթիից երկիր մուտք գործած անձ
- ԱՄՆ մուտք գործելու թույլտվություն ստացած անձ
- մինչև 1980 թ. պայմանականորեն մուտքի թույլտվություն ստացած անձ
- ծեծի ենթարկված կին/ամուսին, երեխա կամ ծնող
- թրաֆիքինգի զոհ կամ վերջինիս կին/ամուսին, երեխա, հարազատ քույր/եղբայր կամ ծնող
- ոչ ներգաղթային վիզայի կարգավիճակ ունեցող անձ (այդ թվում՝ աշխատանքային վիզա, ուսանողական վիզա ունեցող անձ կամ Միկրոնեզիայի, Մարշալի կղզիների և Պալաուի քաղաքացի)
- ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ (TPS) ունեցող կամ ժամանակավոր պաշտպանության կարգավիճակի (TPS) համար դիմած անձ
- հետաձգված բռնի վտարման (DED) կարգավիճակ ունեցող անձ
- հետաձգված վտարման կարգավիճակ ունեցող անձ *Ծանոթություն: Եթե Դուք հետաձգված վտարման կարգավիճակ ունեցող անձ եք՝ Հայրենիքի անվտանգության դեպարտամենտի «Երեխա ժամանակ երկիր մուտք գործելու պատճառով հետաձգված վտարման ծրագրի» (DACA) համաձայն, ապա Դուք օրինական կերպով երկրում բնակվող անձ չեք համարվում*
- ներգաղթի մասին օրենսդրության կամ «Տանջանքների դեմ համաձայնագրի» (CAT) պահանջների համաձայն՝ կասեցված վտարման կամ կասեցված հեռացման կարգավիճակ ունեցող անձ
- ներգաղթի մասին օրենսդրության կամ «Տանջանքների դեմ համաձայնագրի» (CAT) պահանջների համաձայն՝ վտարման կասեցման կամ հեռացման կասեցման կարգավիճակի համար դիմած անձ
- հատուկ անչափահաս ներգաղթողի կարգավիճակի համար դիմած անձ
- օրինական մշտական բնակչի (LPR) կարգավիճակի անցնելու համար դիմած և վիզայի հաստատված հայց ունեցող անձ
- ապաստարանի համար դիմած անձ
- գրանցված դիմող՝ աշխատանքի թույլտվության փաստաթղթով (EAD)
- հսկողության հրաման ունեցող անձ (EAD-ով)
- երկրից հեռացման հրամանի չեղարկման կամ վտարման հրամանի կասեցման համար դիմած անձ (EAD-ով)

Եթե նույնիսկ Ձեր ներգաղթի կարգավիճակը նշված չէ վերը, հնարավոր է, որ Դուք համապատասխանեք առողջության ապահովագրություն ստանալու պահանջներին, և հարկավոր է, այնուամենայնիվ, դիմում ներկայացնել:

Ինքնազբաղությունը

Այս ցուցակի օգնությամբ լրացրեք «Դուք ինքնազբա՞ղ եք» բաժինը

Դուք կարող եք այս տվյալները հանել Ձեր համախառն եկամուտից և հաշվարկել Ձեր զուտ ինքնաշխատ եկամուտը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե ս «Instructions for Schedule C» (ցուցումներ C հավելվածի համար) բաժինը՝ **irs.gov** հասցեում:

- Ավտոմեքենայի և բեռնատարի ծախսերը (ճանապարհն աշխատանքային օրերին՝ առանց մշտական տոմսի)
- Մաշվածությունը
- Աշխատակիցների աշխատավարձերը և ոչ դրամական վարձատրությունը
- Սեփականության, պարտավորությունների կամ գործի ընդհատման ապահովագրությունը
- Վճարվող տոկոսները (օրինակ՝ բանկին վճարվող հիպոտեկի տոկոսը)
- իրավաբանական և մասնագիտական ծառայությունները
- Ձեռնարկության գույքի և սարքավորումների վարձակալությունը
- Միջնորդավճարները, հարկերը, արտոնագրի և այլ վճարումները
- Գովազդը
- Պայմանագրային հիմունքներով տրամադրվող աշխատանքը
- Տեխնիկական սպասարկումը
- Որոշ գործարար ուղևորություններ և ճաշկերույթներ

Այլ եկամուտի օրինակներ

Այս ցուցակի օգնությամբ լրացրեք «Դուք այլ եկամուտ ունե՞ք» բաժինը

- Գործազրկության նպաստներs
- Սոցիալական ապահովության նպաստներ
- Թոշակ և կենսաթոշակ
- Ստացած վարձավճար կամ մասնաբաժին
- Ստացած ապրուստադրամ
- Ներդրումային եկամուտ
- Միջոցների ինքնաճ
- Հողագործությունից կամ ձկնորսությունից ստացած եկամուտ
- Ձեղարկված պարտքեր
- Դատարանով փոխհատուցված վնասներ
- Որպես ատենակալ ստացած վարձատրություն
- Այլ

Հանուրդները

Այս ցուցակի օգնությամբ լրացրեք «Դուք հանուրդներ ունե՞ք» բաժինը

- Ինքնազբաղության հետ կապված որոշ ծախսեր
- Ուսանողական վարկի տոկոսների հանում
- Ուսման վարձ
- Կրկնուսույցի ծախսեր
- Մուծումներ IRA-ին
- Փոխադրման հետ կապված ծախսեր
- Խնայողության վաղաժամ դուրս բերման պատճառով վճարվող տուգանք
- Առողջապահական խնայողական հաշվի հանուրդներ
- Վճարվող ապրուստադրամ
- Տնային արտադրության հետ կապված հանուրդ
- Պահեստային զինվորականների, դերասանների և ինքնաֆինանսավորվող պետական պաշտոնյաների հետ կապված որոշ գործարար ծախսեր

Ձեզ օգնությո՞ն է հարկավոր:

Զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կարող եք զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 20-ը, իսկ շաբաթ օրերին՝ 8-ից 18-ը: Կամ այցելեք **CoveredCA.com**.

Հավելված F

Սեփականության մասին դաշնային հանձնարարականներ

▶ Գնահատեք, թե առողջության ինչ տիպի ապահովագրություն ստանալու պահանջներին Դուք կարող եք համապատասխանել 2014 թ.:

Անձանց թիվը Ձեր տանը	Եթե Ձեր ընտանիքի տարեկան եկամուտն ավելի քիչ է քան՝	Եթե Ձեր ընտանիքի տարեկան եկամուտը հետևյալ գումարների միջև է՝
1	$15,860*	$15,860 – $45,960
2	$21,400	$21,400 – $62,040
3	$26,950	$26,950 – $78,120
4	$32,500	$32,500 – $94,200
5	$38,050	$38,050 – $110,280
	⬇	⬇
	Դուք կարող եք համապատասխանել «Medi-Cal»-ում ընդգրկվելու պահանջներին:	**Դուք կարող եք համապատասխանել «Covered California»-ի միջոցով ֆինանսական օգնությամբ ապահովագրություն ստանալու պահանջներին:**

**Ընտանիքի տարեկան եկամուտի այս տվյալները մոտավոր են և հիմնված են 2013 թ. եկամուտի տվյալների վրա:*

Եթե Դուք արդեն մատչելի գնով ապահովագրություն ստանում եք Ձեր գործատուի կողմից կամ որևէ պետական ծրագրով, օրինակ՝ «Medicare»-ով կամ «Medicaid»-ով, ապա Դուք չեք համապատասխանում «Covered California»-ի առողջության ապահովագրման ծրագրերում ընդգրկվելու պահանջներին:

★ Եթե Դուք երեխաներ ունեք կամ հղի եք, Դուք կարող եք նույնիսկ ավելի բարձր եկամուտ ունենալու դեպքում համապատասխանել «Medi-Cal» կամ AIM ծրագրով անվճար կամ ցածր գնով ապահովագրություն ստանալու պահանջներին: Եթե Դուք հղի եք, ապա Ձեր ապագա երեխան (կամ երեխաները) առանձին անձ են համարվում՝ «Medi-Cal»-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելիս և մեկ անձ՝ «Covered California»-ի միջոցով ֆինանսական օգնություն ստանալու համար:

Ձեզ օգնությո՞ւն է հարկավոր:

Զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կարող եք զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 20-ը, իսկ շաբաթ օրերին՝ 8-ից 18-ը: Կամ այցելեք **CoveredCA.com**:

Հաճախակի տրվող հարցեր (FAQ)

Ինչպես օգնություն ստանալ «Covered California»-ի միջոցով

1. Ի՞նչ է «Covered California»-ն:

«Covered California»-ն նոր շուկա է, որն անհատներին և ընտանիքներին հնարավորություն է տալիս անվճար և ցածր գներով առողջության ապահովագրություն ստանալ «Medi-Cal»-ի միջոցով կամ օգնություն ստանալ «Covered California»-ի միջոցով տրամադրվող առողջության մասնավոր ապահովագրության համար վճարելու հարցում:

Մեր նպատակն է կալիֆոռնիացիների համար դյուրին և մատչելի դարձնել առողջության ապահովագրությունը: «Covered California»-ն Կալիֆոռնիայի Առողջապահական նպաստների փոխանակման ծրագրի և Կալիֆոռնիայի Առողջապահական ծառայությունների դեպարտամենտի կողմից համատեղ իրականացվող ծրագիր է:

2. Ի՞նչ է «Medi-Cal»-ը:

«Medi-Cal»-ը դաշնային «Medicaid» ծրագրի կալիֆոռնիական տարբերակն է: Այն առողջության անվճար կամ ցածր գնով տրամադրվող ապահովագրություն է ծրագրի պահանջներին համապատասխանող կալիֆոռնիացիների համար:

3. Ի՞նչ է «Access for Infants and Mothers»-ը (AIM):

AIM-ն առողջության ցածր գնով տրամադրվող ապահովագրություն է այն հղի կանանց համար, ովքեր առողջության ապահովագրություն չունեն, և ում եկամուտը բարձր է անվճար «Medi-Cal» ստանալու համար: AIM-ը տրամադրվում է նաև այն կանանց, ովքեր ընդգրկված են միայն մայրության համար տրամադրվող հանուրդով և $500-ից բարձր համավճարում պահանջող առողջության մասնավոր ապահովագրման ծրագրերում:

4. Ինչպե՞ս կարող է «Covered California»-ն օգնել ինձ:

«Covered California»-ն կարող է օգնել Ձեզ առողջության այնպիսի մասնավոր ապահովագրություն ընտրել, որը բավարարում է Ձեր առողջապահական կարիքները և համապատասխանում Ձեր նյութական վիճակին:

Մենք առաջարկում ենք նահանգի ամենահայտնի ծրագրերից մի քանիսը, ինչպես նաև որոշ շրջանային և տեղական ծրագրեր: Մենք կարող ենք հասկանալի կերպով բացատրել Ձեզ առողջության ապահովագրման ծրագրերի գները և նպաստները, որպեսզի Դուք կարողանաք համեմատել Ձեր տրամադրության տակ եղած տարբերակները: Նախքան ծրագիր ընտրելը Դուք կիմանաք ճշգրիտ կերպով, թե ինչ եք ստանալու և որքան պետք է վճարեք:

5. Կարո՞ղ եմ ես առողջության ապահովագրություն ստանալ նույնիսկ այն դեպքում, եթե իմ եկամուտը բարձր է:

Այո: Անկախ եկամուտից՝ ծրագրում ընդգրկվելու պահանջներին համապատասխանող ցանկացած կալիֆոռնիացի կարող է առողջության մասնավոր ապահովագրություն գնել «Covered California»-ի միջոցով: Եկամուտի մասին տեղեկությունների օգնությամբ մենք պարզում ենք, թե առողջության որ ապահովագրությունն է ամենամատչելին Ձեր ընտանիքի համար:

6. Առողջության ի՞նչ ապահովագրություն է առաջարկվում «Covered California»-ի միջոցով:

Ձեզ առողջապահական ծրագրերի լայն ընտրանի է առաջարկվում: Առողջության ապահովագրման ընկերությունները **չեն կարող հրաժարվել Ձեզ ապահովագրելուց**՝ այն պատճառով, որ նախկինում Դուք հիվանդ եք եղել և չեք կարողացել ապահովագրություն գնել:

«Covered California»-ն առողջության ապահովագրման մասնավոր ծրագրերի չորս խումբ է առաջարկում՝ «platinum», «gold», «silver» և «bronze», և բացի այդ՝ նվազագույն ապահովագրության ծրագիր:

Յուրաքանչյուր խումբ ապահովագրության տարբեր մակարդակ է առաջարկում՝ բարձրից ցածր: Առողջության ապահովագրման այն ծրագրերը, որոնք ավելի շատ բժշկական ծախսերի համար են վճարում, սովորաբար ավելի բարձր ապահովագին ունեն, սակայն Ձեզ հնարավորություն են տալիս ավելի քիչ վճարել բուժօգնություն ստանալիս:

«Platinum» ծրագրերի ապահովագինն ամենաբարձրն է, սակայն նրանք վճարում են բժշկական ծախսերի մոտ 90%-ը: «Gold» ծրագրերը վճարում են Ձեր բժշկական ծախսերի մոտ 80%-ը, իսկ «silver» ծրագրերը՝ մոտ 70%-ը: «Bronze» ծրագրերի ապահովագինն ամենացածրն է, բայց նրանք վճարում են ապահովագրված բժշկական ծախսերի մոտ 60%-ը: Առկա լիարժեք նպաստային փաթեթների մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել **CoveredCA.com** և կարդալ ծրագրի փաստաթղթերը, օրինակ՝ «Ապահովագրի վկայականը» (Evidence of Coverage) կամ ծրագրի ապահովագրման կանոնները: Կամ զանգահարեք մեզ՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով:

Եթե Դուք համապատասխանում եք «Medi-Cal» ստանալու պահանջներին, ապա ապահովագրված ծառայությունները և ծախսերը կարող են տարբեր լինել և կարող են անվճար լինել Ձեզ համար:

7. Ես կարո՞ղ եմ «Covered California»-ի միջոցով առողջության ապահովագրություն ստանալ:

Ցանկացած կալիֆոռնիացի կարող է առողջության ապահովագրություն ստանալ «Covered California»-ի միջոցով, եթե նահանգի բնակիչ է և բավարարում է ծրագրի մյուս պահանջները:

Դիմորդները կարող են առողջության անվճար կամ ցածր գնով ապահովագրություն կամ ֆինանսական օգնություն ստանալ, որը կնվազեցնի ապահովագնի և համավճարումների չափը: Ֆինանսական օգնության չափը կախված է ընտանիքի անդամների թվից և ընտանիքի եկամուտից: Դիմորդների դիմումն ընդունվում է այն դեպքում, եթե նրանց եկամուտը համապատասխանում է եկամուտի սահմանաչափին:

8. Որքա՞ն արժե:

Գինը կախված է այն բանից, թե առողջության ինչ ապահովագրության կամ ֆինանսական օգնության պահանջներին եք Դուք համապատասխանում, ինչպես նաև այն բանից, թե ինչ ծրագիր եք ընտրում: **CoveredCA.com** կայքում զետեղված գնի հաշվիչի օգնությամբ Դուք կարող եք հաշվարկել Ձեր ապահովագինը և պարզել, թե արդյոք Դուք համապատասխանում եք ապահովագինը վճարելու հարցում օգնություն ստանալու պահանջներին:

Հաճախակի տրվող հարցեր շարունակությունը հաջորդ էջում

Ձեզ օգնությո՞ւն է հարկավոր:

Զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կարող եք զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 20-ը, իսկ շաբաթ օրերին՝ 8-ից 18-ը: Կամ այցելեք **CoveredCA.com**.

CCFRM604 (11/13) HY

Ինչպես օգնություն ստանալ «Covered California»-ի միջոցով *(շարունակություն)*

9. Այս դիմումի հետ միասին ես պե՞տք է ուղարկեմ ապահովագնի իմ առաջին վճարումը:

Ոչ, այս դիմումի հետ մի՛ ուղարկեք Ձեր առաջին վճարումը: Ձեր ծրագիրը Ձեզ հաշիվ կուղարկի, որի վրա նշված կլինի, թե Դուք որքան պետք է վճարեք:

10. Ինչպե՞ս դիմեմ:

«Covered California»-ի միջոցով Դուք կարող եք հետևյալ ձևերով դիմել առողջության ապահովագրություն ստանալու համար.

- **VԱռցանց:** Այցելեք **CoveredCA.com:** Մենք պարզ և հստակ լեզվով տեղեկություններ ենք տրամադրում առողջության ապահովագրման յուրաքանչյուր ծրագրի մասին:
- **Հեռախոսով:** Զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով: Կարող եք զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 20-ը, իսկ շաբաթ օրերին՝ 8-ից 18-ը: Զանգն անվճար է:
- **Ֆաքսով:** Ֆաքսով ուղարկեք Ձեր դիմումը **1-888-329-3700** համարի վրա:
- **Փոստով:** «Covered California»-ի դիմումը փոստով ուղարկեք հետևյալ հասցեով.
- Covered California
  P.O. Box 989725
  West Sacramento, CA 95798-9725:
- **Անձամբ մեզ այցելելով:** Մենք հատուկ պատրաստություն անցած անդամագրման հավաստագրված խորհրդատուներ և ապահովագրման հավաստագրված գործակալներ ունենք, ովքեր կարող են օգնել Ձեզ: Կամ կարող եք այցելել Ձեր շրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակ: Այդ օգնությունն անվճար է: Ձեր բնակության վայրի կամ աշխատավայրի մոտակայքում գտնվող կենտրոնների ցուցակը ստանալու համար այցելեք **CoveredCA.com** կամ զանգահարեք **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500):

11. Ես ներկայումս ընդգրկված եմ «Medi-Cal»-ում: Կարո՞ղ եմ ես առողջության ապահովագրություն ստանալ «Covered California»-ի միջոցով:

Եթե տարվա ընթացքում կամ իրավասության տարեկան վերանայման ժամանակ Ձեր եկամուտը փոխվի, հնարավոր է, որ Դուք համապատասխանեք «Covered California»-ի միջոցով առողջության այլ ապահովագրություն և ապահովագրի վճարման հարցում օգնություն ստանալու պահանջներին:

12. Ի՞նչ անել, եթե ես արդեն առողջության ապահովագրություն ունեմ:

Եթե Դուք արդեն մատչելի գներով առողջության ապահովագրություն ունեք Ձեր գործատուի միջոցով, ապա ոչինչ անելու կարիք չկա: Բայց Դուք կարող եք, համենայն դեպս, դիմել՝ պարզելու համար, թե արդյոք Դուք և Ձեր ընտանիքի անդամները համապատասխանում են առողջության անվճար կամ ցածր գնով ապահովագրություն ստանալու պահանջներին:

Դիմելիս անպայման լրացրեք B հավելվածը և ուղարկեք Ձեր դիմումի հետ միասին:

13. Այժմ, երբ առողջապահության բնագավառի բարեփոխումները սկսվել են, ես առողջության ապահովագրության կարիք ունե՞մ:

2014 թ. հունվարի մեկից սկսած մեծամասնությունը, այդ թվում՝ երեխաները, պարտավոր են լինելու առողջության ապահովագրություն ունենալ կամ տուգանք վճարել: Դա կարող է լինել աշխատավայրից ստացած ապահովագրություն, անձամբ գնած ապահովագրություն, «Medicare» կամ «Medi-Cal»:

Բայց որոշ անձինք ազատված են առողջության ապահովագրություն ունենալու պարտավորությունից: Այդ անձանց թվում են դաշնային կառավարության կողմից ճանաչված այն կրոնական աղանդների կամ խմբակցությունների անդամները, որոնց հավատքն արգելում է նրանց նպաստներ ստանալ առողջության ապահովագրման ծրագրերից, ազատազրկված անձինք, դաշնային կառավարության կողմից ճանաչված հնդկացիական կամ բնիկ ալյասկացիների ցեղերի անդամները և այն անձինք, ովքեր ստիպված են իրենց եկամուտի ավելի քան 8%-ը վճարել առողջության ապահովագրության համար՝ գործատուի կողմից վճարված գումարները կամ ապահովագնի վճարման հարցում ստացած օգնությունը հաշվի առնելուց հետո:

2014 թ. տուգանքը կազմելու է Ձեր տարեկան եկամուտի 1%-ը կամ $95՝ կախված այն բանից, թե որն ավելի շատ կլինի: Ամեն տարի տուգանքի չափը կաճի: Մինչև 2016 թ. այն կազմելու է Ձեր տարեկան եկամուտի 2.5%-ը կամ $695՝ կախված այն բանից, թե որն ավելի շատ կլինի: 2016 թվականից հետո հարկվող տուգանքը տարեցտարի կաճի՝ կենսաածախքի ճշգրտումների հիման վրա:

Տուգանքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **CoveredCA.com** կամ զանգահարեք Ձեր շրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակ կամ «Covered California»:

14. Ես չունեմ բոլոր այն տեղեկությունները, որոնք ինձ անհրաժեշտ են այս դիմումի հարցերին պատասխանելու համար: Ի՞նչ պետք է ես անեմ:

Եթե Դուք բոլոր տեղեկությունները չունեք, ամե դեպքում ստորագրեք և ուղարկեք Ձեր դիմումը: Ձեր դիմումը ստանալուց հետո 10-ից 15 օրացուցային օրվա ընթացքում մենք կզանգահարենք Ձեզ և կասենք, թե ինչ անել: Եթե Դուք մեզանից հեռախոսազանգ չստանաք, խնդրում ենք զանգահարել մեզ՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով:

15. Ի՞նչ տեղի կունենա այն բանից հետո, երբ ես դիմեմ:

Մենք 45 օրվա ընթացքում Ձեզ նամակ կուղարկենք, որում նշված կլինի, թե Դուք և Ձեր ընտանիքը որ ծրագրում ընդգրկվելու պահանջներին եք համապատասխանում: Եթե Դուք մեզանից նամակ չստանաք, խնդրում ենք զանգահարել մեզ՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով:

Հաճախակի տրվող հարցեր *շարունակությունը հաջորդ էջում*

Ձեզ օգնությու՞ն է հարկավոր:

Զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կարող եք զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 20-ը, իսկ շաբաթ օրերին՝ 8-ից 18-ը: Կամ այցելեք **CoveredCA.com**:

Ինչպես օգնություն ստանալ «Covered California»-ի միջոցով *(շարունակություն)*

16. Կարո՞ղ եմ ես օգնություն ստանալ դիմումը լրացնելու կամ ծրագիր ընտրելու հարցում:

Այո: Օգնությունն անվճար է: Անդամագրման հավաստագրված խորհրդատուները և ապահովագրման հավաստագրված գործակալներն աշխատում են համայնքներում՝ նահանգի ողջ տարածքում, և Ձեզ տեղեկություններ կտրամադրեն առողջության ապահովագրման նոր տարբերակների մասին ու կօգնեն դիմել: Դուք կարող եք օգնություն ստանալ նաև այցելելով Ձեր շրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակ: Օգնությունը տրամադրվում է բազմաթիվ լեզուներով:

Օգնություն ստացեք դիմումը լրացնելու կամ ծրագիր ընտրելու հարցում՝

- **Առցանց:** Այցելեք **CoveredCA.com:** Մենք պարզ և հստակ լեզվով տեղեկություններ ենք տրամադրում առողջության ապահովագրման յուրաքանչյուր ծրագրի մասին:
- **Հեռախոսով:** Զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով: Կարող եք զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 20-ը, իսկ շաբաթ օրերին՝ 8-ից 18-ը: Զանգն անվճար է:
- **Անձամբ մեզ այցելելով:** Մենք հատուկ պատրաստություն անցած անդամագրման հավաստագրված խորհրդատուներ և ապահովագրման հավաստագրված գործակալներ ունենք, ովքեր կարող են օգնել Ձեզ: Կամ կարող եք այցելել Ձեր շրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակ: Այդ օգնությունն անվճար է: Ձեր բնակության վայրի կամ աշխատավայրի մոտակայքում գտնվող կենտրոնների ցուցակը ստանալու համար այցելեք **CoveredCA.com** կամ զանգահարեք **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500):

17. Ինչպե՞ս առողջության ապահովագրման ծրագիր ընտրել

Եթե Դուք համապատասխանում եք «Covered California»-ի միջոցով առողջության ապահովագրման մասնավոր ծրագրում ընդգրկվելու պահանջներին, կարող եք այցելել **CoveredCA.com,** որտեղ կարող եք հեշտությամբ համեմատել առողջության ապահովագրման ծրագրերն ու գտնել Ձեր ուզած ծրագիրը: Կարող եք նաև կարդալ «Covered California»-ի առողջապահական ծրագրերի գրքույկները:

«Covered California»-ն առողջության ապահովագրման մի շարք մասնավոր ծրագրեր և «Medi-Cal»-ի ծրագրեր կառաջարկի: Դուք կարող եք այնպիսի մակարդակի ապահովագրություն ընտրել, որը լավագույնս բավարարում է Ձեր առողջապահական կարիքները և համապատասխանում Ձեր նյութական վիճակին:

- Դուք կարող եք որոշել ամսական ավելի մեծ գումար վճարել (որն ապահովագին է կոչվում), որպեսզի բուժօգնություն ստանալիս ավելի քիչ կանխիկ վճարում կատարեք:
- ***Կամ*** կարող եք որոշել ավելի փոքր ամսական գումար վճարել, բայց բուժօգնություն ստանալիս ավելի շատ կանխիկ վճարում կատարել:

Եթե Դուք համապատասխանեք «Medi-Cal» ստանալու պահանջներին, ապա ինչպես ապահովագրությունը, այնպես էլ գները տարբեր կլինեն, և այն կարող է նաև անվճար լինել: «Medi-Cal»-ի Ձեր շրջանում գործող ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք «Care Options»՝ **1-800-430-4263** (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov:**

Ֆինանսական օգնությունը

18. Ես շատ գումար չունեմ: Ի՞նչ ծրագրեր կան, որոնք կօգնեն ինձ առողջության ապահովագրություն ստանալ:

2014 թ. հունվարի 1-ից սկսած առողջության ապահովագրության կարիք ունեցող անձինք կարող են օգնություն ստանալ հետևյալ եղանակներից որևէ մեկով.

A. Օգնություն ամսական ապահովագինը վճարելու հարցում: Ապահովագնի վճարման հարցում օգնությունը տրամադրվում է այն նպատակով, որպեսզի առողջության ապահովագրությունը մատչելի լինի բոլորի համար: Ապահովագնի վճարման հարցում օգնություն ստանալու պահանջներին համապատասխանող անձինք կարող են նախապես ստանալ օգնությունը (նախքան հարկերը վճարելը), որպեսզի նրանց ամսական ապահովագինը ցածր լինի: Կամ կարող են օգնությունը ստանալ տարվա վերջում և ավելի քիչ հարկեր վճարել:

Ապահովագնի վճարման հարցում տրամադրվող օգնության չափը կախված է Ձեր ընտանիքի անդամների թվից և ընտանիքի եկամուտից:

B. «Medi-Cal»: «Medi-Cal»-ը Կալիֆոռնիայի «Medicaid» ծրագիրն է, որը ֆինանսավորվում է դաշնային և նահանգային հարկերի հաշվին: Այն որոշակի պահանջների համապատասխանող ցածր եկամուտ ունեցող կալիֆոռնիացիների համար նախատեսված առողջության ապահովագրություն է:

Եթե Ձեր եկամուտը Ձեր ընտանիքի անդամների թվի համար «Medi-Cal»-ի կողմից սահմանված գումարի սահմաններում է, ապա Դուք «Medi-Cal»-ի ապահովագրություն կստանաք՝ Ձեզ համար անվճար:

19. Եթե իմ եկամուտը փոխվի, ապահովագնի վճարման հարցում իմ ստացած օգնության չափն անմիջապես կփոխվի՞:

Ոչ, ապահովագնի վճարման հարցում Ձեր ստացած օգնության չափն անմիջապես չի փոխվի: Մենք կուսումնասիրենք մեր ստացած նոր տվյալները: Այնուհետև մենք Ձեզ կհայտնենք, թե արդյոք ապահովագնի վճարման հարցում Ձեր ստացած օգնության չափը փոխվում է:

20. Եթե իմ եկամուտը փոխվի, այդ փոփոխությունն ի՞նչ կերպ կազդի ինձ վրա հարկեր վճարելիս

Կարևոր է «Covered California»-ին տեղյակ պահել եկամուտի մեջ տեղի ունեցած այն փոփոխությունների մասին, որոնք ազդում են ապահովագնի վճարման հարցում Ձեր ստացած օգնության չափի (կամ հարկային վարկերի) վրա: Եթե Ձեր եկամուտը նվազի, հնարավոր է, որ Դուք կարողանաք ապահովագնի վճարման հարցում օգնության ավելի մեծ գումար ստանալ և ավելի պակասեցնել Ձեր կանխիկ ծախսերը: Սակայն եթե Ձեր եկամուտն աճի, հնարավոր է, որ ապահովագնի վճարման հարցում Ձեր ստացած օգնությունը հարկ եղածից ավելին լինի, և տվյալ նպաստային տարվա համար հարկերը վճարելիս Դուք ստիպված լինեք դրա մի մասը վերադարձնել:

Հաճախակի տրվող հարցեր *շարունակությունը հաջորդ էջում*

Ձեզ օգնությո՞ւն է հարկավոր:

Զանգահարեք «Covered California»՝ **1-800-996-1009** (TTY՝ 1-888-889-4500) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կարող եք զանգահարել երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 20-ը, իսկ շաբաթ օրերին՝ 8-ից 18-ը: Կամ այցելեք **CoveredCA.com**.

CCFRM604 (11/13) HY

Ֆինանսական օգնությունը
(շարունակություն)

21. Ի՞նչ անել, եթե ես անցյալ տարի հարկեր չեմ վճարել

Նույնիսկ եթե Դուք անցյալ տարի հարկեր չեք վճարել, Դուք կարող եք դիմել առողջության ապահովագրություն ստանալու համար և օգնություն ստանալ ապահովագնի վճարման հարցում: Ձեր եկամուտի տվյալների օգնությամբ մենք Ձեզ և Ձեր ընտանիքի համար ամենամատչելի առողջության ապահովագրությունը կգտնենք:

Եթե Դուք համապատասխանում եք ապահովագնի վճարման հարցում օգնություն ստանալու պահանջներին, ապա պետք է հարկեր վճարեք նպաստային տարվա համար:

22. Ի՞նչ տեղի կունենա, եթե դիմելուց հետո իմ եկամուտը փոխվի

Եթե Ձեր եկամուտը փոխվի, դա կարող է ազդել այն բանի վրա, թե առողջության ինչ տիպի ապահովագրություն ստանալու պահանջներին են Դուք համապատասխանում:

Եթե Դուք առողջության մասնավոր ապահովագրություն ունեք «Covered California»-ի միջոցով, 30 օրվա ընթացքում զանգահարեք և հայտնեք Ձեր եկամուտի մեջ տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին, որը կարող է ազդել Ձեր իրավասության վրա:

Եթե Դուք «Medi-Cal» ունեք և Ձեր եկամուտը փոխվի, 10 օրվա ընթացքում զանգահարեք Ձեր շրջանի սոցիալական ապահովության գրասենյակ:

Այլ հարցեր

23. Դիմումի մեջ նշված բոլոր անձինք պե՞տք է ԱՄՆ քաղաքացի կամ ԱՄՆ հպատակ լինեն:

Ոչ: Նույնիսկ եթե Դուք ԱՄՆ քաղաքացի կամ ԱՄՆ հպատակ չեք, հնարավոր է, որ Դուք համապատասխանեք «Medi-Cal» ստանալու պահանջներին:

24. Իմ ընտանիքը և ես միևնույն ծրագրու՞մ պետք է ընդգրկվենք

Կախված Ձեր ընտանիքի անդամների թվից և ընտանիքի եկամուտից, Դուք և Ձեր ընտանիքը կարող եք տարբեր ծրագրերում ընդգրկվել: Օրինակ՝ Դուք կարող եք համապատասխանել «Covered California»-ի միջոցով տրամադրվող առողջության մատչելի գնով մասնավոր ապահովագրություն ստանալու պահանջներին: Սակայն Ձեր երեխան կարող է համապատասխանել անվճար «Medi-Cal» ստանալու պահանջներին: Մենք Ձեզ կհայտնենք, թե առողջության ինչ տիպի ապահովագրություն ստանալու պահանջներին եք համապատասխանում Դուք և Ձեր ընտանիքի մյուս անդամները:

25. Այս դիմումը մի շարք անձնական բնույթի հարցեր է պարունակում: «Covered California»-ն այլ անձանց կտրամադրի՞ իմ անձնական և ֆինանսական տեղեկությունները:

Ոչ: Ձեր տրամադրած տեղեկությունները գաղտնի են և պահվում են ապահով կերպով՝ ինչպես պահանջում է դաշնային և նահանգային օրենսդրությունը: Ձեր տեղեկությունները մեզ անհրաժեշտ են միայն այն բանի համար, որպեսզի մենք պարզենք, թե արդյոք Դուք համապատասխանում եք առողջության ապահովագրություն ստանալու պահանջներին:

26. Ես կկարողանա՞մ անմիջապես օգտվել «Covered California»-ի առողջության ապահովագրման իմ նոր ծրագրից:

Եթե Դուք դիմում եք 2013 թ. հոկտեմբերից մինչև դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում, ապա առողջապահական ծրագրերը կսկսեն ծառայություններ տրամադրել արդեն 2014 թ. հունվարի 1-ից: Եթե Դուք 2014 թ. հունվարի 1-ից հետո դիմեք, ապա հնարավոր է, որ Ձեր առողջապահական ծրագիրը սկսի ծառայություններ տրամադրել Ձեր դիմելու ամսվա հաջորդ ամսվանից:

27. Ի՞նչ նկատի ունեք «հաշմանդամություն» ասելով:

Դուք կարող եք հաշմանդամություն ունենալ և համապատասխանել «Medi-Cal» ստանալու պահանջներին, եթե՝

- խուլ եք կամ լսողության լուրջ կորուստ ունեք.
- կույր եք կամ տեսողության լուրջ կորուստ ունեք, նույնիսկ եթե ակնոց եք կրում.
- մտավոր կամ ճանաչողական հաշմանդամություն ունեք և դժվարանում եք հիշել, կենտրոնանալ կամ որոշումներ կայացնել.
- առողջական խնդիր ունեք և դժվարանում եք քայլել կամ աստիճաններով բարձրանալ.
- դժվարանում եք լոգանք ընդունել, հագնվել կամ նման այլ առօրյա գործողություններ կատարել.
- ֆիզիկական, հոգեկան կամ զգայական բնույթի առողջական խնդիր ունեք և առանց օգնության դժվարանում եք առօրյա գործողություններ կատարել (օրինակ՝ խանութ գնալ կամ այցելել բժշկի):

Պարտադիր **չէ** տանը հատուկ օգնության ծառայություններ ստանալ կամ բնակվել որևէ տիպի խնամքի հաստատությունում կամ ծերանոցում:

28. Ես նախապես գոյություն ունեցող հիվանդություն կամ հաշմանդամություն ունեմ: Կարո՞ղ եմ ես առողջության ապահովագրություն ստանալ «Covered California»-ի միջոցով:

Այո, ներկայումս կամ անցյալում Ձեր ունեցած որևէ հիվանդությունից կամ հաշմանդամությունից անկախ՝ Դուք կարող եք առողջության ապահովագրություն ստանալ:

2014 թ. սկսած առողջության ապահովագրման ծրագրերի մեծ մասն իրավունք չի ունենա մերժել Ձեզ կամ ավելի շատ գումար պահանջել նախապես Ձեր ունեցած որևէ հիվանդության կամ հաշմանդամության պատճառով:

29. Ես հենց նոր պարզել եմ, որ հղի եմ: Կարո՞ղ եմ դիմել առողջության այնպիսի ապահովագրություն ստանալու համար, որը հղի ժամանակ ինձ ապահովագրություն կտրամադրի:

Այո: Դիմումի «Դուք հղի՞ եք» հարցին «այո» պատասխանեք կամ Ձեզ օգնողին խնդրեք լրացնել Ձեր դիմումը: Դուք կարող եք առողջության այնպիսի ապահովագրության համար դիմել, որն ապահովագրում է նախածննդյան խնամքը, երկունքը և ծննդաբերությունը և հետծննդյան խնամքը: Առողջության ապահովագրման ծրագրերն այլևս չեն կարող մերժել Ձեզ այն բանի պատճառով, որ Դուք հղի եք:

Հաճախակի տրվող հարցեր *շարունակությունը հաջորդ էջում*

Ինչպես օգնություն ստանալ այլ լեզուներով

Դուք կարող եք այս դիմումը լրացնելու հարցում օգնություն ստանալ այլ լեզուներով: Զանգահարեք 1-800-996-1009:

Podemos ayudarle en español a llenar esta solicitud. Llame al 1-800-300-0213.

SPANISH

您可以透過其他語言獲得此申請的幫助。請致電 1-800-300-1533.

TRADITIONAL CHINESE

Quý vị có thể được trợ giúp về đơn đăng ký này bằng tiếng Việt. Hãy gọi 1-800-652-9528.

VIETNAMESE

이 응용 프로그램에 대한 한국어 지원을 받으실 수 있습니다. 전화: 1-800-738-9116.

KOREAN

Maaari kang kumuha ng tulong para sa aplikasyong ito sa Tagalog. Tumawag sa 1-800-983-8816.

TAGALOG

Koj txais tau kev pab nrog kev tso npe no ua lus Hmoob. Hu 1-800-771-2156.

HMONG

Вы можете получить помощь в оформлении этой заявки на русском языке. Звоните по телефону 1-800-778-7695.

RUSSIAN

Դուք կարող եք հայերենով օգնություն ստանալ այս դիմումի ձևը լրացնելու հարցում: Զանգահարեք 1-800-996-1009.

ARMENIAN

می توانید در ارتباط با این فرم تقاضا به زبان های دیگر کمک دریافت کنید. با شماره 1-800-921-8879 تماس بگیرید.

FARSI

អ្នកអាចទទួលបានជំនួយចំពោះពាក្យសុំនេះជាភាសាខ្មែរ។ សូមទូរស័ព្ទមកលេខ 1-800-906-8528.

KHMER

يمكنك الحصول على مساعدة خاصة بهذا التطبيق باللغة العربية. اتصل بـ 1-800-826-6317.

ARABIC

«Հավանեք» «Covered California»-ն «Facebook»-ում: Այցելեք Facebook.com/CoveredCA:

Հետևեք մեզ CoveredCA հասցեում